

2015-2018 թվականների ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագիր

Ամբիոնի աշխատանքները պլանավորել Բոլոնիայի գործընթացում Հայաստանի ստանդնած պարտավորությունների շրջանակներում և դրան համահունչ

Ուսումնամեթոդական

1. Գիտական աստիճան ունեցող դասախոսներով, ժամավճարային կարգով աշխատանքի հրավիրել իրավապահ մարմինների բազմափորձ մասնագետներին:
2. Պահանջել ամբիոնի դասախոսներից պարբերաբար հանդես գալ ամբիոնի նիստերում ուսումնագիտական և մեթոդական հաղորդումներով իրենց մասնագիտական հմտությունների բարձրացման վերաբերյալ:
3. Իրավագիտության բաժնի դասախոսական կազմը համալրել բանհմաց, փորձառու
4. Ամբիոնի երիտասարդ մասնագետներից պահանջել ուսումնագիտական գործընթացի ակտիվացում, գիտական թեմաների հաստատում, դրանց վերաբերյալ պարբերաբար հաղորդումներ ամբիոնի նիստերին:
5. Պարբերաբար ամբիոնի գիտամեթոդական նիստերում լսել դասախոսների ուսումնամեթոդական աշխատանքների նյութերը և դրանցից լավագույնները երաշխավորել տպագրության:
6. Փիլիսոփայության և իրավագիտության կաբինետը ապահովել ժամանակակից տեխնոլոգիաներ ապահովող ակտիվ գրատախտակով և կաբինետ-լսարանը վերածել դատական նիստերի դահլիճի կրկնօրինակի:
7. Նոր ուսումնամեթոդական նյութերով, նորագույն գիտական գրականությամբ պարբերաբար թարմացնել, համալրել դասախոսությունների ծրագրերը, տեքստերը, հարցաշարերը, թեստերը և ամբիոնի կաբինետը:
8. Ըստ ամբիոնի առարկայական բլոկների ընդհանուր գիտական ուսումնասիրության թեմաների հստակեցման կազմակերպել դասախոսների աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու համար:
9. Շարունակել նոր դասընթացների մշակումը և ներդրումը ուսումնական գործընթացում՝ արդի պահանջներին համապատասխան:
10. Լայնորեն կիրառել գիտելիքների ստուգման նոր մեթոդները, բարձացնել դրանց արդյունավետությունը:
11. Ուսումնական և արտադրական պրակտիկաները կազմակերպել Լոռու մարզի իրավապահ մարմիններում և պարբերաբար քննարկել դրանց անցկացման արդյունավետությունը:
12. ՎՊՀ-ի տարբեր բաժիններում անցկացնել բաց դասեր կրթական ժամանակակից տեխնոլոգիաների լայն կիրառմամբ:

13. Ավելի մեծացնել միջամբիոնային ուսումնամեթոդական սեմինարների քանակը՝ դրանց մասնակից դարձնելով բուհի հարակից ամբիոնների դասախոսներին:
14. Դպրոցների, վարժարանների հումանիտար հոսքի ուսուցիչների համար մշակել ուսումնամեթոդական նյութեր, հանդես գալ դասախոսություններով:
15. Աշխուժացնել ՈԻԳԸ աշխատանքները, թեմաները ընտրել ամբիոնի թեմատիկաների համապատասխան , լավագույն աշխատանքները լսել գիտամեթոդական խորհրդում, ուղարկել միջբուհական ուսանողական կոնֆերանսներին:
16. Պարբերաբար անցկացնել գիտական կոնֆերանսներ, դասախոսական ընթերցումներ՝ տարբեր բուհերի մասնակցությամբ:

Կազմակերպչական

1. Ամբիոնը հանդիսանում է թողարկող իրավագիտություն մասնագիտության գծով, քանի որ այստեղ են կենտրոնացված իրավագիտության բլոկի բոլոր առարկաները, ուստի անհրաժեշտ է ամբիոնի անվանման մեջ արտահայտել այդ հանգամանքը, և այն անվանակոչել Փիլիսոփայության և իրավագիտության ամբիոն:
2. Շարունակել ընդլայնել ամբիոնի գիտական և ուսումնամեթոդական կապերը հանրապետության ներսում և արտերկրի համապատասխան ամբիոնների հետ:
3. Ավելի աշխուժացնել ու բազմակողմանի դարձնել բուհ-դպրոց կապի շրջանակներում աշխատանքները սովորողների հետ և ընդլայնել խորհրդատվական ուսումնամեթոդական սեմինարները դպրոցների հումանիտար հոսքի ուսուցիչների համար:
4. Ամբիոնի կաբինետը կահավորել ժամանակակից տեսալսողական և համակարգչային տեխնիկայով , ինտերնետային կապով և ինտերակտիվ գրատախտակով:
5. Համալրել կաբինետը նոր գրականությամբ, դիդակտիկ նյութերով և կահավորանքով:
6. Ամբիոնի կողմից կազմակերպվող հանրապետական կոնֆերանսները դարձնել ավանդական, հնարավորության դեպքում դրանց մասնակից դարձնել արտերկրի բուհերի դասախոսներին:
7. Ամբիոնը համալրել բարձր որակավորում ունեցող իրավաբան երիտասարդ մասնագետներով:
8. Ուսանողներին մասնակից դարձնել ամբիոնի աշխատանքներին (նիստեր, տեսամեթոդական ընթերցումներ), պարբերաբար նրանց հետ անցկացնել զրույցներ, քննարկումներ ամբիոնի ընդհանուր թեմաների շուրջ:
9. Աշխատանքներ տանել իրավագիտության գծով մագիստրատուրա ունենալու համար:

Փիլիսոփայության և քաղաքագիտության
ամբիոնի վարիչ՝ Գ. Եթիմյան

13.11.2018թ.